ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Վարկային քարտեր

Հրապարակվել է՝ 30.05.2024թ.

1	Վարկի հիմնական չափանիշներ	
1.1	Վարկային քարտի[1] տեսակ	1. Վարկային քարտ արտոնյալ ժամանակահատվածով 2. Վարկային քարտ առանց արտոնյալ ժամանակահատվածի
1.2	Վարկի ձևակերպման վայր	Բանկի ցանկացած մասնաճյուղ
1.3	Վարկի տրամադրման եղանակ	Անկանխիկ՝ հաճախորդի գործող վարկային քարտին
1.4	Նպատակային խմբեր	**Խումբ 1՝ Բանկի աշխատավարձային նախագծերի /հավատարմագրված կազմակերպությունների/ աշխատակիցներ** **Խումբ 2՝ Ֆիզիկական անձինք, ովքեր ունեն «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ հաշիվներով 3 ամսից ոչ պակաս շրջանառվող աշխատավարձ, կանոնավոր եկամուտ (համաձայնագրերի, պայմանագրերի և այլնի վրա հիմնված)** **Խումբ 3՝ Ֆիզիկական անձինք, ովքեր ունեն «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ հաշիվներով չշրջանառվող աշխատավարձ, կանոնավոր եկամուտ (համաձայնագրերի, պայմանագրերի և այլնի վրա հիմնված)**
1.5	Նպատակային խմբերի սահմանաչափեր (վարկի առավելագույն գումար*) * ոչ ավել քան 2,500,000 ռուբլուն համարժեք ՀՀ դրամ, փոխանակման փոխարժեքի տատանումից կախված	Խումբ 1՝ հարկումից հետո աշխատավարձի մինչև 8-պատիկի չափով* Խումբ 2՝ Բանկի հաշիվներով շրջանառվող ամսական եկամտի մինչև 4-պատիկի չափով Խումբ 3՝ հարկումից հետո հաստատված ամսական եկամտի մինչև 3-պատիկի չափով (կախված վարկային պատմությունից) * 2-5 տարի վարկի ժամկետի դեպքում և քարտային հաշվին յուրաքանչյուր մուտքից 5%-ի չափով վարկային գծի սահմանաչափի պարտադիր մարումներ սահմանելու դեպքում, հակառակ դեպքում աշխատավարձի մինչև 6-պատիկի չափով
1.6	Վարկի արժույթ	ՀՀ դրամ
1.7	Վարկի նվազագույն գումար	30,000 AMD
1.8	Տարեկան անվանական տոկոսադրույքը դեբետային (բացասական) մնացորդի վրա[2]	AMD 11-19.5% **Վարկային հաշվի հավելյալ[4] սպասարկմամբ վարկի ստացման ընտրության դեպքում տոկոսադրույքից վեղչ՝ տարեկան անվանական տոկոսադրույք հանած 1%:** **Հաճախորդի ընտրությամբ կարող է սահմանվել վարկային գծի ամբողջ ժամկետի համար արտոնյալ ժամկետ տոկոսադրույքի մասով և տվյալ դեպքում սահմանվում է անտոկոս ժամանակահատված՝ տարեկան տոկոսադրույք՝ 0% (այսուհետ՝ Սուպեր Քարտ):**
1.9	Տարեկան փաստացի տոկոսադրույք	12%-24%
1.10	Վարկային գծի երկարաձգման հնարավորություն	Մոնիթորինգի դրական վարկային պատմության պարագայում (ուշացումների բացակայություն և այլն) երկարաձգումը կատարվում է ավտոմատ, այլ դեպքերում՝ հայտի հիման վրա: Վերլուծության արդյունքում հնարավոր է նաև վարկային գծի վերաձևակերպում վճարման հավասարաչափ ժամանակացույցով վարկի տեսքով:
1.11	Վարկային գծերի երկարաձգման դեպքում տարեկան տոկոսադրույք	**- Վարկային գծի միայն երկարաձգման դեպքում՝ երկարաձգվող վարկային գծի գործող տոկոսադրույքին հավասար:** **- Վարկային գծի սահմանաչափի ավելացման դեպքում (վարկային գծի երկարաձգման հետ մեկտեղ կամ առանց) վարկային գծի տոկսադրույքը սահմանվում է "Տարեկան անվանական տոկոսադրույք" կետի համաձայն:** **Վճարման հավասարաչափ ժամանակացույցով վարկի վերաձևակերպման դեպքում նոր վարկի պայմանները (տոկոսադրույք, միջնորդավճար) սահմանվում են գործող վարկային գծի պայմաններին համապատասխան:** **Վարկի ամսական սպասարկման միջնորդավճարը հաշվարկվում է հետևյալ միջնորդավճարների հանրագումարի տեսքով՝ քարտի ամսական սպասարկման, վարկի ամսական սպասարկման և քարտի/վարկի տարեկան սպասարկման միջնորդավճարը բաժանած 12-ի:**
1.12	Արտոնյալ ժամկետ* (քաղվածքի ձևավորման օրվանից), օրեր (արտոնյալ ժամանակահատվածով վարկային քարտի դեպքում)	Mir Classic - 15 Visa Classic/MasterCard Standard (թողարկումը դադարեցված է) - 15 Visa Gold/MasterCard Gold (թողարկումը դադարեցված է) – 20 * Արտոնյալ ժամկետ՝ որոշակի ժամանակահատված, որի ընթացքում հաճախորդից վարկային գծի օգտագործված մասով վարկային պարտքի լրիվ մարման դեպքում հաշվարկված տոկոսները չեն գանձվում:
1.13	Տոկոսագումարի հաշվարկման և վճարման կարգը	Տոկոսագումարի հաշվարկը կատարվում է վարկի գումարի օգտագործված մասի նկատմամբ օգտագործման օրվանից օրական կտրվածքով և ենթակա է վճարման ամսական պարբերականությամբ:
1.14	Հիմնական պարտքի չափը նվազագույն մնացորդի հաշվարկի համար	10%

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել, ինչի մասին տեղեկանալու և այլ մանրամասն տեղեկություններ ստանալու համար վանգահարեք 87-87 հեռախոսահամարով, այցելեք Բանկի մոտակա մասնաճյուղ կամ ինտերնետային կայք՝ www.vtb.am հասցեով:

1.15	Վարկային սահմանաչափի մարման մաս (հաճախորդի ընտրությամբ)	Քարտային հաշվին մուտքագրված յուրաքանչյուր գումարի 20% չափով
1.16	Վարկի առավելագույն ժամկետ	60 ամիս (ինչպես նոր վարկային գծերի, այնպես էլ գործող վարկային գծերի երկարաձգումների դեպքում)
1.17	Վարկի նվազագույն ժամկետ	6 ամիս
1.18	Վարկի վաղաժամկետ մարման արգելք	Վաղաժամկետ մարման մասով սահմանափակումներ չկան: Վարկառուն/ները իրավունք ունի/են՝ - առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծել վարկային պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում (մտածելու ժամանակ): Այդ դեպքում Վարկառուն/ները պարտավոր է/են վարկի փաստացի օգտագործված օրերի համար վճարել վարկային պայմանագրով նշված փաստացի տոկոսադրույքով հաշվարկված տոկոսագումարները: **- վարկային պայմանագրով նախատեսված ժամկետներից շուտ մարել վարկը: Տվյալ դեպքում Վարկառուի/ների նկատմամբ տուժանք չի կիրառվում, ընդ որում՝** **• ենթակա են նվազեցման վարկի մնացորդի նկատմամբ հաշվարկվող տոկոսների, միջնորդավճարների և սպասարկման վճարների ծախսը,** **• ենթակա չեն նվազեցման սույն պայմանագրի պայմանների չկատարմա կամ ոչ պատշաճ կատարման համար վճարված տուժանքները, վարկի մարման և/կամ տոկոսների վճարման նպատակով կատարված փոխանցումների համար, ինչպես նաև այդ նպատակով բացված հաշիվների սպասարկման համար վճարված գումարները, նոտարական վավերացման, պետական գրանցման (նշված ծառայությունների առկայության դեպքում) դիմաց կատարված վճարները, հավելյալ՝սույն վարկի հետ կապ չունեցող, վարկառուի ցանկությամբ ընտրված ապահովագրական ծառայությունների դիմաց կատարված ապահովագրավճարները:** **Վարկի ամբողջական վաղաժամկետ մարման դեպքում ենթակա են վերադարձման նախապես վճարված, սակայն փաստացի չօգտագործված ամիսների/օրերի համար կատարված վճարները:**
1.19	Վարկառուի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում կիրառվող տույժ	**Վարկային պայմանագրով նախատեսված ժամկետներում վարկի մայր գումարը և/կամ տոկոսագումարները չվճարելու դեպքում Բանկն իրավունք ունի դադարեցնել վարկի ժամկետանց* մասի նկատմամբ տոկոսագումարների հաշվարկը՝ պահպանելով չժամկետանցված մասի նկատմամբ տոկոսագումարների հաշվարկը, և ժամկետանց վարկի և/կամ ժամկետանց տոկոսագումարների նկատմամբ (մինչև դրանց փաստացի վճարումը) կիրառել տույժ՝ օրական 0.13% չափով, սակայն ոչ ավել, քան ՀՀ օրենսդրությամբ սահմանված տուժանքի առավելագույն չափը, իսկ նշված առավելագույն չափին հասնելուց հետո Բանկն իրավունք ունի վերականգնել վարկի մնացորդի (ներառյալ ժամկետանց մասի) նկատմամբ տոկոսագումարների հաշվարկը:** *** ժամկետանց է համարվում հաճախորդի քարտային հաշվի վրա մուտքերի բացակայությունը 55 օրացույցային օրվա ընթացքում անընդմեջ կամ վարկային գծի օգտագործված գումարների (հաշվեգրված տոկոսների հետ միասին) չմարումը վարկային գծի սահմանաչափի ժամկետի ավարտից 15 օրվա ընթացքում:**
1.20	Պարտավորությունների չկատարման դեպքում հնարավոր բացասական հետևանքներ	**ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾԱԾԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՎԱՐԱՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ՄԱՐՎԵԼ ՁԵՐ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԻՆ:** **ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՁԵՐ ԳՈՒՅՔԸ (ՏՈՒՆԸ, ՄԵՔԵՆԱՆ ԿԱՄ ԱՅԼ) ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵՔ ՁԵՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ:** **ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:**
1.21	Վճարման սահմանաչափը գերազանցելու դեպքում կիրառվող տույժ գերազանցող գումարի նկատմամբ (տույժ սահմանաչափը գերազանցելու համար)	**Արտոնյալ ժամանակահատվածով վարկային քարտի դեպքում** **Mir Classic/Visa Classic/MasterCard Standard - 20% նվազ. 500 ՀՀ դրամ, առավ. 10,000 ՀՀ դրամ** **Visa Gold/MasterCard Gold - 20% նվազ. 500 ՀՀ դրամ, առավ. 20,000 ՀՀ դրամ** **Առանց արտոնյալ ժամանակահատվածի վարկային քարտի դեպքում** **գերածախսի դեպքում դադարում է գործել պայմանագրով նախատեսված տոկոսադրույքը և վարկային գծի սահմանաչափը գերազանցող գերածախսի վրա հաշվեգրվում է տոկոսադրույք 36.5% դրույքով:**
1.22	Տուգանքներ	**Արտոնյալ ժամանակահատվածով վարկային քարտի դեպքում** **մինչև արտոնյալ ժամանակահատվածի վերջին օրը ներառյալ վարկի օգտագործված մասի 10%-ի չմարման դեպքում գանձվում է տուգանք՝** **Mir Classic/Visa Classic/MasterCard Standard - 5,000 ՀՀ դրամ** **Visa Gold/MasterCard Gold - 10,000 ՀՀ դրամ** **Առանց արտոնյալ ժամանակահատվածի վարկային քարտի դեպքում** **մինչև յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը ենթակա է մարման (վճարման) նախորդող երկրորդ ամսվա վերջին աշխատանքային օրվա դրությամբ վարկային սահմանաչափի օգտագործված մասի 10%-ը ներառյալ տվյալ պահին հաշվեգրված տոկոսագումարը, հակառակ դեպքում գանձվում է տուգանք՝ 5,000 ՀՀ դրամ:**
1.23	Վարկի որոշման կայացման և հաճախորդին տեղեկացման ժամկետ	Հաշված րոպեների ընթացքում
1.24	Վարկային գծի տրամադրման մասին դրական որոշման գործողության առավելագույն ժամկետ	30 օրացույցային օր՝ վարկային գծի տրամադրման մասին դրական որոշման կայացման օրվանից

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել, ինչի մասին տեղեկանալու և այլ մանրամասն տեղեկություններ ստանալու համար վանգահարեք 87-87 հեռախոսահամարով, այցելեք Բանկի մոտակա մասնաճյուղ կամ ինտերնետային կայք՝ www.vtb.am հասցեով:

1.25	Վարկառուին վարկի տրամադրման ժամկետ	Հաստատումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում
1.26	Ապահովություն	Աշխատավարձի/եկամտի և հաճախորդի հաշվին դրամական մուտքերի ստացման իրավունք
2	**Բանկի միջնորդավճարներ**	
2.1	Հայտի դիտարկման միանվագ միջնորդավճար	**Նախատեսված չէ**
2.2	Վարկի տրամադրման միանվագ միջնորդավճար[3]	Վարկի գումարի 2.9%, բայց ոչ ավել 50,000 AMD: **Սուպեր Քարտի դեպքում սահմանված չէ:**
2.3	Վարկային հաշվի սպասարկման ամսական միջնորդավճար (պարտադիր)	**Սահմանված չէ, բացառությամբ Սուպեր Քարտի դեպքում՝ 1%-1.6%**
2.4	Վարկային հաշվի հավելյալ[4] սպասարկման ամսական միջնորդավճար (կամավոր)	Վերոնշյալ միջնորդավճարին գումարվում է նաև (կախված վարկի գումարից)՝ • մինչև 1,500,000ՀՀ դրամ վարկի գումարի դեպքում՝ տրամադրված վարկի գումարի 0.15%, բայց ոչ պակաս, քան 500 AMD, • 1,500,001 ՀՀ դրամ վարկի գումարի դեպքում՝ տրամադրված վարկի գումարի 0.12%, բայց ոչ ավել քան 3,000 AMD.
3	**Վարկառուին/Համավարկառուին ներկայացվող պահանջներ**	
3.1	Կարգավիճակ	1. ՀՀ ռեզիդենտ, ով ունի անձը հաստատող փաստաթղթում նշված մշտական գրանցման կամ փաստացի բնակության հասցե 2. ԼՂՀ-ում հաշվառված քաղաքացիներ, որոնք ստանում են եկամուտ ՀՀ-ում
3.2	Վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ	Բանկի ներքին իրավական փաստաթղթերի համաձայն
3.3	Ընդհանուր աշխատանքային փորձ	Խումբ 3-ի և Կորպորատիվ ուղղվածության սեգմենտ ունեցող կավմակերպության աշխատակիցների (բացի Կորպորատիվ ուղղվածության սեգմենտի աշխատակիցներից, որոնք ունեն "ՎՏԲ - Հայաստան Բանկ" ՓԲԸ-ի հաշիվներով շրջանառվող կայուն աշխատավարձ առնվազն վերջին 3 ամիսների ընթացքում) համար՝ անընդմեջ աշխատանքային ստաժ վերջին աշխատանքային վայրում 4 ամիսների ընթացքում: Աշխատանքային ստաժը չի պահանջվում միայն «1000+» հիմնադրամի հատուցման գումարներից ստացած եկամուտների հիման վրա հայտերի դեպքում:
3.4	Վարկառուի տարիք	Վարկի տրամադրման պահին վարկառուի/համավարկառուի տարիքը պետք է լինի նվազագույնը 21 տարեկան, իսկ վարկի մարման պահին չպետք է գերազանցի վարկառուի թոշակի անցնելու տարիքը:
4	**Լրացուցիչ պայմաններ**	
4.1	Վարկային հաշվի գծով քաղվածքի/տեղեկանքի տրամադրում	"ՎՏԲ-Հայաստան Բանկ" ՓԲԸ գործող "Բանկային հաշիվների բացման և սպասարկման պայմանների և սակագների" համաձայն, որոնց կարող եք ծանոթանալ Բանկի ինտերնետային կայքում՝ https://www.vtb.am/am/deposit/bank-account-1 հասցեով:
4.2	[1] Վարկային քարտի թողարկման և սպասարկման պայմաններն ու սակագները՝ համաձայն "ՎՏԲ-Հայաստան Բանկ" ՓԲԸ գործող "Առանց արտոնյալ ժամանակահատվածի վարկային քարտի պայմանների և սակագների" կամ "Արտոնյալ ժամանակահատվածով վարկային քարտի պայմանների և սակագների"	
4.3	**[2] Հաճախորդի կողմից Բանկում աշխատավարձ ստանալու դեպքում գործում են վեղչեր: Բանկում աշխատավարձ չստանալու դեպքում նշված վեղչը կարող է չեղարկվել, որի արդյունքում վարկի անվանական տոկոսադրույքը կբարձրանա տվյալ վեղչի չափով:**	
4.4	[3] Միջնորդավճարը գանձվում է ինչպես նոր վարկային գծի տրամադրման, այնպես էլ վարկային գծի երկարաձգման և/կամ սահմանաչափի ավելացման դեպքերում: Սահմանաչափի ավելացման դեպքում միջնորդավճարը գանձվում է վարկային սահմանաչափի ավելացված մասի վրա, սակայն սահմանաչափի ավելացման հետ միասին վարկային գծի երկարաձգում կատարելու դեպքում միջնորդավճարը գանձվում է ամբողջ վարկային սահմանաչափից (գործող գումարած ավելացվող): Միջնորդավճարը գանձվում է՝ - նոր վարկային գծի տրամադրման դեպքում՝ քարտով առաջին գործարքի կատարումից հետո: - վարկային գծերի երկարաձգման դեպքում՝ վարկի երկարաձգման պահին:	
4.5	[6] Վարկային հաշվի հավելյալ սպասարկումը իր մեջ ներառում է հետևյալ ծառայությունները. - հատուկ ընդհանրացված տեղեկատվական ձևաչափով հաճախորդի վարկային պատմության վերաբերյալ (ԱԲՌԱ հարցման պատասխանի հիման վրա ձևավորված) տեղեկատվության տրամադրում, - դժբախտ պատահարներից ապահովագրություն՝ վարկի մնացորդի չափով Վարկային հաշվի հավելյալ սպասարկման ժամանակահատվածում: Վարկային հաշվի հավելյալ սպասարկման ծառայությունից հրաժարվելու դեպքում տոկոսադրույքից կատարված համապատասխան վեղչը կչեղարկվի և վարկի տարեկան տոկոսադրույքը կբարձրացվի տվյալ վեղչի չափով:	

Վարկային քարտին վարկային գծի տրամադրման համար Վարկառուից և Երաշխավորից պահանջվող փաստաթղթերի ցանկ

Խումբ 1՝

1.Անձը հաստատող փաստաթուղթ

2.Հանրային ծառայությունների համարանիշ (սոցիալական քարտ) (ՀՀ քաղաքացու դեպքում), բացակայության դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք

Խումբ 2, Խումբ 3՝

1.Անձը հաստատող փաստաթուղթ

2.Հանրային ծառայությունների համարանիշ (սոցիալական քարտ) (ՀՀ քաղաքացու դեպքում), բացակայության դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք

3.Եկամուտների մասին տեղեկանք կամ այլ եկամուտները հավաստիացնող փաստաթղթերի պատճեներ (բացառությամբ այն դեպքի, երբ ստանում են աշխատավարձ/եկամուտ Բանկում)

4. **Անհրաժեշտության դեպքում Բանկի կողմից կարող են պահաջվել այլ փաստաթղթեր:**

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել, ինչի մասին տեղեկանալու և այլ մանրամասն տեղեկություններ ստանալու համար վանգահարեք 87-87 հեռախոսահամարով, այցելեք Բանկի մոտակա մասնաճյուղ կամ ինտերնետային կայք՝ www.vtb.am հասցեով:

Ուշադրություն՝
Հաճախորդի վարկային հայտը մերժվում է, եթե՝
- **Հաճախորդի կողմից չեն ներկայացվել վարկ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթեր,**
- **Հաճախորդը չի բավարարում Բանկի նվազագույն պայմաններին,**
- **«ԱՔՌԱ» վարկային բյուրո հարցման արդյունքում պարզվել է, որ Հաճախորդը (առկայության դեպքում նաև Համավարկառուները/Երաշխավորները) ունի բացասական վարկային պատմություն,**
- **Վարկունակության գնահատման արդյունքում պարզվել է, որ Հաճախորդը վարկունակ չէ,**
- **Վարկավորման գործընթացի արդյունքում հաճախորդի վերաբերյալ հայտնի է դարձել այնպիսի տեղեկություն, որը կասկածի տակ է դնում հաճախորդի կողմից ներկայացված տեղեկության հավաստիությունը:**

Ուշադրություն՝
Ֆինանսական կազմակերպության կողմից սպառողին վարկ տրամադրելու դրական որոշման բոլոր գործոնները և վարկի մերժման բոլոր գործոնները, որոնք սահմանված են ֆինանսական կազմակերպության կողմից ընդունված ներքին իրավական ակտերով, տեղեկատվություն վարկ տրամադրելու որոշումների կայացման համար կիրառվող վարկարժանության գնահատման եղանակների վերաբերյալ (վարկային պատմություն, վարկային սքոր), այդ թվում՝
ա. Վարկային պատմության էությունը, կարևորությունը, ինչպես է այն ձևավորվում, ինչ տեսակի և ինչ վաղեմության տեղեկատվություն է պարունակում, ինչ պետք է անեն սպառողները սխալ կամ թերի վարկային պատմությունը փոփոխելու համար և այլն, ինչպես նաև հղում www.abcfinance.am և www.acra.am կայքերի համապատասխան էջերին:
բ. Վարկային սքորի (կիրառելու դեպքում) էությունը, կարևորությունը, ինչ տեսակի վարկային սքոր է կիրառվում ֆինանսական կազմակերպության կողմից (Ֆայկո, ԱՔՌԱ, սեփական սքոր գնահատական, թե այլ): Սեփական վարկային սքոր կիրառելու դեպքում տեղեկատվություն սքորի հաշվարկի վրա ազդեցություն ունեցող հիմնական գործոնների (օրինակ՝ գործող վարկերի գումար և քանակ, վարկային պատմության երկարություն, վարկային հարցումներ, ժամկետանց վարկեր և այլն) և դրանց ազդեցության ուղղության (բարձրացնում է, թե իջեցնում է սքորը) վերաբերյալ: ԱՔՌԱ կամ Ֆայկո սքոր կիրառելու դեպքում տեղադրվում են հղումներ www.abcfinance.am և www.acra.am կայքերի համապատասխան էջերին:
գ. Ինչ քայլեր կարող են ձեռնարկել սպառողները իրենց վարկային պատմությունը և սքորը բարելավելու համար (օրինակ՝ մարել գործող վարկերի մի մասը, բացառել գործող վարկերի գծով ժամկետանց պարտավորությունների առկայությունը), ինչպես նաև ինչ գործողություններ չպետք է անեն վարկային պատմության և սքորի վատթարացումից խուսափելու համար:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՁԵՌ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍ ԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ԲԱՆԿԻ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔՈՒՄ՝ https://www.vtb.am/NewVersion/uploads/ampopagrer/Credit/APY_arm.pdf ՀՂՈՒՄՈՎ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՎԱՐԱԿՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՌ ՀԱՄԱՐ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏ ՀԱՆԴԻՍԱՆԱԼ ԱՅԼ ՎԱՐԿԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ:
ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԻՍ ԲԱՆԿԸ ՁԵՌ ԿՏՐԱՄԱԴՐԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵՌ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵՌ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է՝ www.fininfo.am

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ Բանկը՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով, կարող է
Հաճախորդից «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ Հաճախորդին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել, ինչի մասին տեղեկանալու և այլ մանրամասն տեղեկություններ ստանալու համար վանգահարեք 87-87 հեռախոսահամարով, այցելեք Բանկի մոտակա մասնաճյուղ կամ ինտերնետային կայք՝ www.vtb.am հասցեով: